

ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ՆԵԼԼԻ ՍԱՐԳՍԻ ԽԱՆՈՅԱՆ

ԳԵՐՄԱՆԵՐԵՆԻ ՇԱՐԱՀՅՈՒՍՈՒԹՅԱՆ ՏԻՊԱԲԱՆԱԿԱՆ
ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Ժ. 02. 07- «Գերմանական լեզուներ» մասնագիտությամբ
բանասիրական գիտությունների թեկնածուի գիտական
աստիճանի հայցման ատենախոսության

Ս Ե Ղ Մ Ա Գ Ի Ր

ԵՐԵՎԱՆ 2013

Ատենախոսության թեման հաստատվել է Երևանի պետական համալսարանում:

Գիտական ղեկավար՝

բանասիրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Յու. Մ. Գաբրիելյան

Պաշտոնական ընդդիմախոսներ՝

բանասիրական գիտությունների դոկտոր Շ. Հ. Պարոնյան

բանասիրական գիտությունների թեկնածու Ն. Ն. Մկրտչյան

Առաջատար կազմակերպություն՝


Երևանի Վ. Բոյուսովի անվան պետական լեզվաբանական համալսարան

Ատենախոսության պաշտպանությունը կայանալու է 2013 թ. մայիսի 10-ին, ժամը 14:30-ին, ՀՀ ԲՈՂ-ի 009 Գերմանական լեզուների ԵՊՀ-ում գործող մասնագիտական խորհրդի նիստում (Երևան, Ալեք Մանուկյան 1):

Ատենախոսությանը կարելի է ծանոթանալ ԵՊՀ գրադարանում:

Սեղմագիրն առաքվել է 2013 թ. ապրիլի 9-ին:

Մասնագիտական խորհրդի գիտական քարտուղար, Բ. գ. դ., պրոֆեսոր՝ Ե. Լ. Երզնկյան



Լեզուների շարահյուսական կառուցվածքների տարաբնույթ ուսումնասիրությունների շարքում առանձին տեղ են գրավում

տիպաբանական հետազոտությունները, որոնց արդյունքները մեծապես նպաստում են ինչպես առանձին լեզուների, այնպես էլ ընդհանրապես մարդկային լեզվի էության ու գործառնության առանձնահատկությունների պարզաբանմանը: Այս առումով գերմաներենի շարահյուսությանը նվիրված տիպաբանական աշխատությունները ևս մեծ թիվ են կազմում, որտեղ համապատասխան տեսական դրույթների և այլ լեզուների փաստերի ներգրավմամբ փորձ է արվել վեր հանել գերմաներենի նախադասության, ինչպես նաև առանձին շարահյուսական կազմությունների իմաստագործառական, շարահյուսական, շարադասական և այլ կարգի առանձնահատկությունները: Այդուհանդերձ, այս լեզվի հիշյալ յուրահատկությունների պարզաբանումը տիպաբանության դիրքերից մինչ այժմ իրականացվել է հիմնականում եվրոպական լեզուների տվյալների հաշվառումով, մինչդեռ մեր մայրենի լեզվի փաստերի օգնությամբ կարելի է բացահայտել գերմաներենի շարահյուսական կառուցվածքի ձևավորման և հաղորդակցական գործառնության այնպիսի իրողություններ, որոնք այլ դեպքերում հնարավոր չէ պարզել: Նշենք նաև, որ գերմաներենի տիպաբանական ուսումնասիրության մեջ հայերենի փաստերի ներգրավումը նույնպես աննախադեպ չէ, եթե նկատի ունենանք Յու. Գաբրիելյանի «Գերմաներեն լեզվի տիպաբանություն» աշխատությունը, որտեղ, սակայն, առանձին անդրադարձ է կատարվել միայն գերմաներենի (մասամբ նաև հայերենի) շարահյուսական կառուցվածքների կաղապարավորման խնդիրներին, իսկ դրանց ձևավորման և գործառնական յուրահատկությունների ժամանակագրական, ինչպես նաև զուտ ներլեզվական միտումների բացահայտման քննությունչի կատարվել, ինչը փորձ է արվում իրականացնել այստեղ:

Ընդհանուր առմամբ, լեզուների տիպաբանական ուսումնասիրությունն իրականացվում է սովորաբար ըստ երկու սկզբունքների՝ հարցաթերթային և չափանմուշային: Առաջին սկզբունքի դեպքում առաջնային է դիտվում այն հատկանիշների ամբողջությունը, որոնք բնութագրում են կոնկրետ լեզուն: Երկրորդ սկզբունքի դեպքում ընտրվում է այն լեզուն, որի առանձնահատկություններից ելնելով բնութագրվում է մյուս լեզուն (կամ լեզուները): Այսպիսով, չափանմուշ-լեզուն ներկայացնում է կանոնների համակարգ, որի հիման վրա կարելի է կառուցել ցանկացած նկարագրություն¹: Սույն աշխատանքում գործադրված են երկու սկզբունքները միաժամանակ. գերմաներենի շարահյուսության տիպաբանական յուրահատկությունները ներկայացվում են ինչպես ներլեզվական յուրահատկությունների, այնպես էլ հայերենի համապատասխան փաստերի հետ զուգադրմամբ:

Թեմայի արդիականությունը: Նկատի ունենալով, որ լեզուների ժամանակակից ուսումնասիրությունների համար այսօր կարևորվում են

¹ԳաբրիելյանՅու. Գերմաներեն լեզվի տիպաբանություն, Երևան, Երևանի համալս. հրատ., 2006, էջ 5-6:

ոչ միայն գործաբանական ու միջնշակությամբ հաղորդակցման, այլև տիպաբանական տեսությունները, սույն աշխատության թեման արդիական է այն առումով, որ կոնկրետ լեզվի ուսումնասիրության տեսական և գործնական խնդիրներն առավել արդյունավետ համատեղվում են տիպաբանական բնույթի հետազոտություններում: Բացի այդ, տիպաբանական ուսումնասիրությունները հնարավորություն են ընձեռում հասնել լեզվական երևույթների տարբեր առանձնահատկությունների առավել ընդհանրացմանը, ինչը մեծապես նպաստում է նաև լեզուների գործնական ուսումնասիրությանը: Այլ կերպ՝ կոնկրետ լեզվի գործնական ուսուցման գործընթացում զուգահեռ դիտարկվում են նաև այլ լեզուների (հատկապես մայրենի լեզվի) համապատասխան երևույթները, որի արդյունքում ի հայտ են գալիս քննարկվող լեզվական իրողության խոսքային յուրահատկությունները ևս: Ասվածն ամբողջությամբ վերաբերում է նաև գերմաներենի շարահյուսությանը, որին նշված սկզբունքներով անդրադառնում է սույն աշխատանքը:

Ուսումնասիրության նպատակն ու խնդիրները: Հետազոտության նպատակն է համակողմանի ուսումնասիրության ենթարկել գերմաներենի շարահյուսական կառույցների առանձնահատկությունները, ինչպես տարածամանակյա, այնպես էլ համաժամանակյա հայեցակետերով՝ առանձին դեպքերում ներառելով նաև հայերենի համապատասխան փաստերը: Սույն աշխատանքի նպատակներից է նաև լուսաբանել ժամանակակից գերմաներենի ներլեզվական միտումների յուրահատկությունները: Վերոհիշյալը փորձ է արվել իրականացնել հետևյալ խնդիրների պարզաբանմամբ.

- հնարավորինս հանգամանալից ներկայացնել հին բարձր գերմաներենի, միջին բարձր գերմաներենի և վաղ նոր բարձր գերմաներենի նախադասության կառուցվածքային ամբողջությունն ապահովող միջոցները՝ դրանց ձևավորման հստակ միտումների հաշվառումով,
- տարածամանակյա տիպաբանության դիրքերից վերլուծության ենթարկել վերոհիշյալ շրջաններում առկա շարահյուսական տարբեր կառույցների առանձնահատկություններն ու դրանց հետագա զարգացումը,
- պարզաբանել նոր բարձր գերմաներենի շրջանում շարահյուսական տարբեր կառույցների զարգացումը՝ առանձնակի կարևորելով բայի դիրքն իր տիպաբանական բնութագրերով,
- ուսումնասիրել «շրջանակային կառույցների» զարգացումը, նախադասության մեջ առանձին շարահասակա՞ն դաշտերի տիպաբանական յուրահատկությունները, որոնց շնորհիվ հնարավոր է դառնում գերմաներենում շարահյուսական բազմաթիվ երևույթների մեկնաբանությունը,
- ներկայացնել գերմաներենի պատմական զարգացման տարբեր փուլերում առկա փոփոխությունները,

- ուսումնասիրել նախադասության ներսում կաղապարների փոփոխության, նախադասության ծավալի կրճատման, «շրջանակագերծումների», ժամանակի, սեռի, եղանակի կարգերում առկա փոփոխությունների միտումնային բնութագրերը:

Գիտական նորույթը: Աշխատանքում առաջին անգամ փորձ է արվում իրականացնել գերմաներենի շարահյուսական կառուցվածքի տիպաբանական առանձնահատկությունների քննություն՝ ժամանակագրական իրողությունների հաշվառումով և գերմաներենի զարգացման տարբեր փուլերին բնորոշ փաստերի ներգրավմամբ: Սույն հետազոտությունում նորույթ է նաև համապատասխան երևույթների պարզաբանման մեջ հայերենի փաստերի ներառումը, ինչը մեծապես նպաստում է ինչպես գերմաներենի մի շարք յուրահատկությունների, այնպես էլ մեր մայրենիի առանձին շարահյուսական կառույցների էության բացահայտմանը:

Առաջադրված խնդիրները քննվում են ընդհանուր համեմատությունների, զուգարակյան, բաշխումնային, փոխակերպման և կառուցվածքային վերլուծության լեզվաբանական մեթոդների կիրառմամբ, որոնք հնարավորություն են տալիս պարզաբանել գերմաներենի շարահյուսության առանձնահատկությունները: Ուսումնասիրությունն իրականացվում է արդի տիպաբանության հիմնադրույթների հաշվառումով: Առաջադրված խնդիրները պարզաբանվում են հիմնականում գեղարվեստական գրականությունից վերցված համապատասխան բնութագրական օրինակներով:

Ուսումնասիրության տեսական և գործնական արժեքը:

Ուսումնասիրության մեջ առաջադրված խնդիրներն առնչվում են լեզվի շարահյուսական, մասամբ նաև ձևաբանական մակարդակներին: Ուսումնասիրությունը կարող է օգտակար լինել գերմաներենի նախադասության շարադասական և շարակազմական կառուցվածքն առավել խորն ուսումնասիրելու և ըմբռնելու տեսակետից: Ուսումնասիրության արդյունքները, բացի համապատասխան բնույթի հետազոտություններից, գործնականում կարող են կիրառվել գերմաներենի տիպաբանության, ինչպես նաև տեսական և գործնական քերականություններին նվիրված բուհական դասընթացներում:

Ատենախոսության կառուցվածքը և ծավալը:

Աշխատանքը բաղկացած է ներածությունից, երեք գլխից, եզրակացություններից, օգտագործված գիտական և գեղարվեստական գրականության, բառարանների, ինչպես նաև համառոտագրության ցանկերից(154 էջ ընդհանուր ծավալով):

Ներածության մեջ հիմնավորվում է թեմայի ընտրությունը, արդիականությունը, գիտական նորույթը, տեսական և գործնական նշանակությունը, նշվում են ուսումնասիրության առարկան, նպատակները, գործադրված մեթոդները:

Առաջին գլխում(«Գերմաներենի շարահյուսական կառուցվածքի տարածամանակյա տիպաբանական բնութագիրը») շարահյուսական

տարբեր կառույցները քննվում են գերմաներենի զարգացման տարբեր փուլերում՝ ընդգրկելով հին բարձր գերմաներենի (հ.բ.գ.), միջին բարձր գերմաներենի (մ.բ.գ.) և վաղ նոր բարձր գերմաներենի (վ.ն.բ.գ.) շրջանները: Ցույց է տրվում, որ չնայած հ.բ.գ.-ում բառակապակցության կամ նախադասության մեջ բառերի դասավորությունը դեռ այնքան էլ կայուն չէր, ինչպես ժամանակակից գերմաներենում է, այնուամենայնիվ, առկա միտումներն էլ էին բավական նախադասության կառուցվածքային ամբողջությունն ապահովելու համար: Եթե նոր բարձր գերմաներենում գլխավոր նախադասությունը բայի թեքվող ձևի համար, այսպես կոչված, բայի երկրորդ դիրքն է նախընտրում, ապա հ.բ.գ.-ում բայը կարող էր հանդես գալ առաջին, վերջին կամ երկրորդ դիրքում, ինչպես՝

ա) V1 (բայն առաջին դիրքում)՝ *ferstiez er den satanan, Four thô Joseph fon Galileufontherbürgis* այլն /Mettke, „Aus dem Tatian“, 1970:63/,

բ) V1 (բայը վերջին դիրքում)՝ *Sô iung tholôn mahti, Al thaz thû gibiudist* /Mettke, „Das Ludwigslied“, 1970:53/,

գ) V2 (բայը երկրորդ դիրքում)՝ *Thanne sprach Hludugig, Thô nam her skild indi sper...* /Mettke, „Das Ludwigslied“, 1970:53-54/:

Ստորադասական նախադասության մեջ թեքվող բայի վերջին դիրքում գտնվելը, սակայն, հանդես չի գալիս որպես բացարձակ իրողություն, և հնարավոր են նաև շեղումներ: Նախադասության կառուցվածքի տեսանկյունից, ստորադասական նախադասությունում նման կարևոր բաղադրիչի վերջին դիրքը նշանակում է, այսպես կոչված, «շրջանակային կառույցի» ստեղծում: Այստեղ խոսքը վերաբերում է այնպիսի կառույցներին, որոնք կազմում են շարահյուսական մի ամբողջություն և միմյանցից բաժանվում են նախադասության այլ անդամների դրանց միջև ներթափանցմամբ²:

Ավելի հստակ կերպով, քան հ.բ.գ.-ում է, մ.բ.գ.-ում բարդ բայական բաղադրիչների տարածական բաշխումը ձևավորում է մասնակի կամ լիարժեք շրջանա-կային կառույցներ: Իհարկե այս խնդրի հետ կապված բավականին շեղումներ են նկատելի, որոնք պայմանավորված են տարբեր գործոններով: Մասնավորապես պոեզիայում շրջանակային կառույցի կիրառումը կամ բացթողումը սերտորեն կապված է հանգավորման, ժանրի ոճական նկատառումների, բանաստեղծի անհատական կրթվածության և այլնի հետ: Այդուհանդերձ ձգտումը շրջանակային կառույցին նկատելի է:

Վ.ն.բ.գ. շրջանի գրավոր հուշարձաններին ևս հատուկ է բարբառային գերակայությունը: Վերոհիշյալ շրջանում, բնականաբար, դեռ շարունակում են գործել հին շարահյուսական օրինաչափությունները, բայց դրանք հիմնականում հակասական են

²Գաբրիելյան Յու. Գերմաներեն լեզվի տիպաբանություն, Երևան, Երևանի համալս. հրատ., 2006, էջ 90:

իրենց բնույթով: Այս շրջանում շարադասության հետ կապված խնդիրները բավականին վիճելի են, քանի որ շատ հուշարձաններում նկատելի է բարդ բայական բաղադրիչների իրար մոտ դասավորման հստակ միտում, այսինքն շրջանակային կառույցների լիարժեք կամ մասնակի խախտում: Ճիշտ է, այդ խախտումները միայն այս շրջանի համար չեն բնութագրական, որովհետև դրանք առկա էին նաև գերմաներենի զարգացման վաղ փուլերում, պարզապես այս շրջանում դրանք ուշագրավ են իրենց լայն տարածմամբ, օրինակ՝ *Dez menschin lip ist gemachet uz vier elementen* և այլն /Uustalu, „Meinauer Naturlehre“, 1978 :51/:

Երկրորդ գլխում(«Ժամանակակից գերմաներենի շարահյուսության տիպաբանական առանձնահատկությունները») քննարկվում են շարադասական առանձին դաշտերը, որտեղ վերլուծության ելակետ են հանդիսանում շրջանակային կառույցները: Այսպիսով, ժամանակակից գերմաներենում շրջանակային կառույցներն իրենց լիարժեք զարգացումն են ապրում: Հարկ է նշել, որ բայի թեքվող և չթեքվող մասերի տարանջատումը և այլ անդամների ներթափանցումը դրանց միջև բնութագրական է գերմաներենին: Անզերեմում, օրինակ, միջին և հետին դաշտերի առանձնացում չկա, քանի որ գլխավոր նախադասության մեջ բայի թեքվող և չթեքվող ձևերն ընդմիջարկվող չեն, ինչպես՝ *I will buy* this car և երկրորդական նախադասության մեջ բայը վերջում չի դրվում, ինչպես՝ *I know, that I will buy* this car.

Նույնը վերաբերում է հայերենին, իհարկե որոշ վերապահումներով: Ճիշտ է, թեև հայերենում շարադասական դաշտերի հստակ սահմանազատում հնարավոր չէ, սակայն, վերլուծական կամ բաղադրյալ ժամանակների, ինչպես նաև երկրորդական վերլուծական ժամանակների կիրառության դեպքում տրամաբանական շեշտի առկայությամբ հայերենում ևս հնարավոր է տարանջատել շարադասական դաշտեր: Եթե դիտարկենք վերևի օրինակը՝ *Ես կգնեմ այս մեքենան/Ես գիտեմ, որ ես կգնեմ այս մեքենան* կամ *Ես գիտեմ, որ ես գնելու եմ այս մեքենան*, ապա այստեղ միանշանակ բայի թեքվող և չթեքվող մասերի տարանջատում չկա, սակայն եթե նախադասությունը կազմվի հետևյալ կերպ՝ *Ես գիտեմ, որ ես եմ այս մեքենան գնելու*, ապա վերջին դեպքում մենք նկատում ենք տարանջատում: Թեև այս պարագայում չենք կարող անտեսել տրամաբանական շեշտի առկայությունը, որն ընդգծելով այն հանգամանքը, որ *եմ* և ոչ թե մեկ ուրիշն է գնելու մեքենան, ցույց է տալիս շեշտված բառի կամ բառախմբի նշանակության ուղղվածությունը: Օժանդակ բայը կարող է նույն ձևով հարել նախադասության յուրաքանչյուր անդամի, եթե անհրաժեշտ է վերջինիս ընդգծումը: Հայերենում այն միշտ միտում ունի անցնելու այն եզրը, որտեղ տրամաբանական շեշտ է գտնվում: Այստեղ հարկ է խոսել նաև նախադասության ակտուալ տրոհման մասին, այսինքն թեմայի և ռեմայի (ելակետի և միջուկի): Սովորական շարադասությամբ միջուկը (այսինքն ստորոգյալը, որը սովորական շարադասությամբ ենթակայից հետո է դրվում, որևէ բան է հաստատում

կամ ժխտում) չի շեշտվում: Սակայն խոսքը միշտ չէ, որ միապաղաղ է արտաբերվում, և այդ նպատակով էլ խոսքի շղթայում շեշտվում է այն բառը, որը դառնում է հաղորդման միջուկը՝ ռեման: Ուստի խոսողը խոնարհված բայը կամ օժանդակ բայը դնում է հենց այդ միջուկից հետո՝ ընդգծելով այն³:

Շրջանակային կառույցների միջոցով նախադասության մեջ ձևավորվում են դիրքային (շարահասական) դաշտերը: Հարկ է նշել, որ դիրքային դաշտերի բաժանումը վաղեմի ավանդույթ ունի գերմաներենի քերականագիտական աշխատություններում, այն խորապես ուսումնասիրվել և հետագա զարգացում է ստացել 20-րդ դարի լեզվաբաններ Է.Դրախի, Կ.Բուսթի, Հ.Գլինցի և այլոց աշխատություններում: Է.Դրախը, սակայն, առաջինն էր, ով նշեց *նախադաշտ* (Vorfeld) և *հետին դաշտ* (Nachfeld) եզրույթները⁴: Համապատասխան դաշտերի սահմանագատումը նախադաշտի, միջին և հետին դաշտերի ընդհանուր առմամբ իրացվում է հետևյալ կերպ. երկու շրջանակային դաշտերի միջև միջին դաշտն է (ՄԴ), ձախ շրջանակից առաջ՝ նախադաշտը (ՆԴ), (դրանից առաջ էլ նախանախադաշտը), աջ շրջանակից հետո՝ հետին դաշտը (ՀԴ):

Շարահասական դաշտերի բաժանումն ուշագրավ է նրանով, թե նախադասության մեջ իրար հետ կապակցված տարրերն ինչպես են նշված դաշտերում տեղակայվում: Ընդհանուր առմամբ կարելի է ասել, որ այն նախադասություններում, որտեղբայր երկրորդ դիրքում է, ձախակողմյան շրջանակը (ՁՇԿ) զբաղեցվում է միշտ բայի թեքվող մասով, իսկ աջակողմյան շրջանակի (ԱՇԿ) զբաղեցումը փոփոխական է դառնում, ինչպես, օրինակ՝

ՆԴ	ՁՇԿ	ՄԴ	ԱՇԿ	ՀԴ
a. Peter	liest	ein Buch,	Ø	wenn er mit der Bahn nach München fährt.
b. Peter	hat	ein Buch	lesen wollen,	als er mit der Bahn nach München fuhr.
c. Peter	kauft	neue Bücher	ein,	wenn er in München ist.
d. Ø	Komme	heutespäter.		
e. Ø	Kenne	ich nicht.		

Աջակողմյան շրջանակում կարող է դրվել բայի չթեքվող մասը (b), ինչպես նաև բայի բաժանարար հավելվածը (c), հնարավոր է նաև, որ

³Աբրահամյան Ս. Գ., Առաքելյան Վ. Դ., Քոսյան Վ. Ա. Հայոց լեզու, մաս II, Շարահյուսություն, Երևան, Լույս, 1975, էջ 265:

⁴Drach E. Grundgedanken der deutschen Satzlehre, Frankfurt am Main, Verlag M. Diefterweg, 1937; Boost K. Neue Untersuchungen zum Wesen und zur Struktur des deutschen Satzes, Berlin, Akademie-Verlag, 1964; Glinz H. Die innere Form des Deutschen. Eine neue deutsche Grammatik, Bern, München, Francke Verlag, 1952.

այն դատարկ մնա: Եթե ստորոգյալը բաղկացած է մի քանի չթեքվող մասերից, կարելի է ասել, որոշք բայական կառույցը կազմում է աջակողմյան շրջանակը: Նշենք, որսերող քերականության շրջանակներում դիրքային դաշտերի նմուշին անդրադառնալիս աջակողմյան շրջանակում դիտարկվում է միայն բայական այն հատվածը, որն ամենամոտն է նշված շրջանակին: Ինչպես՝ Peter hat einBuchlesenwollenօրինակում lesen անորոշ դերբայն ընդունվում է որպեսմիջին դաշտի բաղադրիչ:

Նախադաշտի նկարագրության և պարզաբանման հարցում կարևոր խնդիրն այն է, թե ինչպես է իրացվում թեքվող բաղադրիչից դեպի ձախ դիրքի գրավումը: Անհրաժեշտ ենք համարում նախ և առաջ անդրադառնալ այն հանգամանքին, որ նախադաշտից առաջ էլ կարող է դրվել որևէ բաղադրիչ⁵: Խոսքն այստեղ գլխավոր նախադասության շաղկապների, ձայնարկությունների, կոչականի մասին է: Այս բաղադրիչները պարունակող դիրքը գերմանագիտության մեջ անվանվում է նախանախադաշտ (Vor-Vorfeld): Նախանախադաշտի բաղադրիչների շարահյուսության տեսանկյունից կարևոր առանձնահատկությունն այն է, որ դրանք հեշտությամբ կարող են դուրս բերվել նախադասության կազմից՝ չխախտելով վերջինիս քերականական ճիշտ կառուցվածքը, օրինակ՝

Oh, sie fühlt es auch, ... /Zweig, 2001: 207/

Օ՛, նա էլ է դա գգում ...:

Ներկայացնելով նախադաշտի զբաղեցման գործառույթի հետ կապված հիմնական մոտեցումները՝ նշենք, որ համակողմանի ուսումնասիրություններն այս ոլորտումցույց են տվել, որ նախադասության անդամներից շատերը կարող են հանդես գալ նախադաշտում⁶: Այդուհանդերձ մեծամասամբ ենթական է զբաղեցնում այն, թեպետ քիչ չեն նաև այն դեպքերը, երբ նշված դաշտում հանդես են գալիս խնդիրները, պարագաները, նախդրավոր որոշիչները և այլն: Օրինակ՝

Gestern wäre die bei dem Sturm und Regen noch ganz angemessen **gewesen** /Timm, 2008: 70/.

Երեկ դա փոթորկի և անձրևի ժամանակ լիովին տեղին կլիներ: Von einem Leiter müsste er aber noch mehr **verlangen** /Hein, 2002:79/.

Ղեկավարիցպետք է նա, սակայն, էլ ավելին **պահանջեր**:

⁵Scheutz H. SatzinitialenVoranstellungen im gesprochenen Deutsch, Opladen, WestdeutscherVerlag, 1997.

⁶Lühr R. Zu einer besonderen Form der Vorfeldbedingung im Deutschen // Studia Linguistica. et Philologica, Heidelberg, Ruprecht-Karl-Universität, 1984, S. 385-389; Mode D. Syntax des Vorfeldes. Zur Systematik und Didaktik der deutschen Wortstellung, Tübingen, Niemeyer, 1987; Marillier J.-F. Satzanfang – Satzende. Syntaktische und, semantische und pragmatische Untersuchungen zur Satzabgrenzung und Extraposition im Deutschen, Tübingen, Gunter Narr, 1993.

ինչպես տեսնում ենք, երկրորդօրինակի դեպքում հայերենում ևս հնարավոր է նշված անդամների նախադաշտում հանդես գալը, սակայն կրկին տրամաբանական շեշտի առկայությամբ:

Պարագա, ենթակա և խնդիր երկրորդական նախադասությունները ևս հանդիպում են նախադաշտում, օրինակ՝

Als sie im Haus verschwunden waren, lief ich ihnen hinterher/Hein, 2002:70/.

Երբ նրանք տան մեջ անհայտացան, վազեցի նրանց հետևից:

Հայերենում ևս նշված երկրորդական նախադասությունների տեղակայումը նախադաշտում թույլատրելի է կրկին տրամաբանական շեշտի առկայությամբ:

Մեկ այլ կարևոր գործառույթ, որն իրականացնում է նախադաշտը, այն է, որ վերջինս կարող է ընդունել ինչպես համատեքստից արդեն ծանոթ, հիշատակված բաղադրիչ, այնպես էլ՝ նոր, դեռևս չհիշատակված: Խոսքն այստեղ թեմատիկ և ռեմատիկ տարրերի մասին է, ընդ որում ըստ է. Բենեշի նախադաշտի ռեմատիկ տարրերով զբաղեցումն առավել բնութագրական է առօրյա խոսակցական լեզվին՝ իր ակնառու հուզարտահայտչական դրսևորումներով ⁷ : Թե գործաբանական ինչ գործառույթով է հանդես գալիս նախադաշտի բաղադրիչը, միայն հարաբերականորեն է կախված համատեքստից: Օրինակ **Anfang März** findet die nächste Tagung statt (Մարտի սկզբին տեղի է ունենալու հաջորդ նիստը) նախադասության մեջ ժամանակի պարագա արտահայտող տարրերը կարող են դիտվել որպես ռեմատիկ, եթե խոսակիցը պատասխանում է այն հարցին, թե երբ է տեղի ունենալու նիստը: Նշված տարրերը կարող են լինել նաև թեմատիկ, ի պատասխան այն հարցին, թե որ նիստն է տեղի ունենալու մարտի սկզբին:

Հարցական բառով կազմված հարցական նախադասություններում, որպես կանոն, նախադաշտում ինչպես գերմաներենում, այնպես էլ հայերենում կարող է դրվել հարցական բառը, օրինակ՝ Washabt ihr letzte Nacht gemacht? Ի՞նչեք դուք անցյալ գիշեր **արել**:

Հրամայական նախադասություններում նախադաշտը, որպես կանոն, դատարկ է, սակայն առօրյա խոսքում հաճախ են հնչում նմանատիպ նախադասությունները՝ Dubleib jetzt erst mal **sitzen!** Ապա տեղդ նստիր:

Նախադաշտի զբաղեցումը պետք է դիտարկել նաև որպես հաղորդակցական գործունեություն, որն ունենալով համապատասխան նշանակություն, չի կարող թույլ տալ անդամների կամայական զբաղեցում:

⁷Beneš E. Die Besetzung der ersten Position imdeutschenAussagesatz // Moser: Fragen der strukturellen Syntax und der kontrastiven Grammatik, Düsseldorf, Narr, 1975, S. 160-182.

Գերմաներենում ժխտական nie, niemals, nirgends ժխտական բառերը կարող են լինել նախադաշտում, nicht-ը սակայն՝ խիստ նշույթավորված տարբերակով, իսկ հայերենում այն չի կարող դրվել նախադաշտում: Օրինակ՝

Dies ist eine Erklärung. **Nicht** ist es eine Entschuldigung.Սա բացատրություն է:Ներողություն **չէ** սա:

Գերմաներենում նախադասության ձախակողմյան և աջակողմյան շրջանակային կառույցների միջև՝ միջին դաշտում, տեսականորեն անսահմանափակ քանակությամբ անդամներ կարող են տեղադրվել: Քանի որ տարրերի քանակն այստեղ ավելի մեծ է, քան մյուս երկու դաշտերում առկա անդամներինը, այստեղ շարակազմության հետ կապված ամենալուրջ խնդիրներն են առաջանում:

Դերանվանական անդամների դեպքում շարակազմության ընդհանուր պատկերը շարադասական այս դաշտում հետևյալն է՝ ենթակա-հայցական խնդիր-տրական խնդիր (հմմտ. Dass **ich es ihm** gegeben habe): Ըստ Հ. Վեգեների՝ դերանունների նման դասավորությունը պատկանում է «աճող» անդամների կանոնին՝ („Das Gesetz der wachsenden Glieder“), այսինքն միավանկ դերանունները դրվում են երկվանկներից առաջ (sie ihnen), կարճ ձայնավորները երկարներից առաջ (mich dir) և այլն⁸: Խնդիրն այլ է դերանվանական և նախադասության անվանական անդամների համակցման դեպքում: Որպես կանոն դերանվանական անդամը ոչ նշույթավորված ասույթի դեպքում դրվում է անվանական անդամից առաջ (հմմտ. dass ich ihn dem Kind geschenkt habe/*dass ich dem Kind ihn geschenkt habe): Ինչ վերաբերում է «աճող անդամների» կանոնին, ապա կարճ, միշտ անշեշտ խնդիր դերանուն es-ը դրվում է միջին դաշտի սկզբում, որտեղ կարող են դրվել նաև անշեշտ եղանակավորող բառ-մասնիկները, ինչպես halt, doch և այլն, օրինակ՝

- Du weißt,
- a) dass ich es ihm gegeben habe/*dass ich ihm es gegeben habe.
 - b) dass ich halt keine Zeit habe/*dass ich keine Zeit halt habe.
 - c) dass ich doch gerne ein Buch lese/*dass ich gerne doch ein Buch lese.

Նախդրավոր խնդիրների, մակբայների և սեռական հոլովով դրված խնդիրների դեպքում գործում են շարակազմության հետևյալ կանոնները. բայը վերջին դիրքում հանդես եկող նախադասություններում դրանք դրվում են անմիջապես թեքվող բայից առաջ (հմմտ. ստորև բերված օրինակների a) նախադասությունները): Միջին դաշտում դրանց նախահար լինելը խիստ նշույթավորված է, եթե ոչ քերականորեն սխալ:

- a) Ich ärgere mich darüber, dass du dem Jungen zum Nachgeben rätst.
- b)? ich ärgere mich darüber, dass du zum Nachgeben dem Jungen rätst.
- a) Ich möchte nicht, dass du deinen Sohn der Lüge berichtigst.
- b)? Ich möchte nicht, dass du der Lüge deinen Sohn berichtigst.

⁸Wegener H. Die Nominalflexion des Deutschen, Tübingen, Niemeyer, 1995, S. 137.

- a) Ich möchte nicht, dass du das Buch in den Schrank legst.
 b) Ich möchte nicht, dass du in den Schrank das Buch legst.

Հայերենում միջին դաշտի առկայությունը կրկին պայմանավորված է տրամաբանական շեշտով: Միջին դաշտում անդամների հերթագայության խնդրին անդրադարձել է նաև Ու. Էնգելը, ով նշված դաշտում իրացվող տարրերի ամբողջությունը բաժանում է երեք խմբի՝ ենթակա լրացում, հայցական լրացում, տրական լրացում, որոնք դրվում են միջին դաշտի սկզբում, դրանց հետևում են պարագաները և ապա մնացած լրացումները⁹: Բայն այստեղ դիտարկվում է որպես բարդ բայական կառույցի մի մաս և որպես նախադասության սահմանի եզր /օրինակներն ըստ՝ Engel, 1994:185/:

Man wollte **die Kinder für eine Woche ins England** schicken.

Eakk Atemp Edir

Կարելի էր **երեխաներին մեկ շաբաթվա**նգլիաուղարկել:

Նշված նախադասության դեպքում հայերենում ևս բացվում է միջին դաշտ, որտեղ կարելի է տեսնել անդամների գրեթե նույն շարակազմությունը:

Հետին դաշտի զբաղեցումն առաջնային չէ, այստեղ սահմանափակ քանակությամբ տարրեր կարող են դրվել, իսկ ավելի հստակ՝ նախադաշտի որոշ տարրեր: Այս դաշտի դեպքում ևս, ինչպես նախադաշտի դեպքում էր, շատ լեզվաբանների կողմից առաջ է քաշվում այն դրույթը, որ հետին դաշտը կարող է զբաղեցվել միայն մեկ անդամով: Այս պնդումն անվերապահորեն ընդունել, թերևս, չի կարելի, քանի որ բազում օրինակներ կարող են նշվել, որտեղ հետին դաշտը զբաղեցված է նախադասության բազմաթիվ անդամներով: Նշված դաշտում կարող են լինել նաև բարդ հարաբերական նախադասություններ, որոնց առկայությունը հիմնավորվում է ռճական նկատառումներով, քանզի վերջիններիս հիմնական դիրքը միջին դաշտն է¹⁰:

Ich möchte endlich das Buch lesen, **das ich mir schon drei Wochen gekauft habe**.

Ես կցանկանայի վերջապես այն գիրքը կարդալ, **որն արդեն երեք շաբաթ է, ինչ գնել եմ**:

Paul hat sich an der Uni eingeschrieben **für Mathematik, Physik und Philosophie**.

Պաուլն է համալսարանում գրանցվել **մաթմատիկայի, ֆիզիկայի և փիլիսոփայության համար**:

Ինչպես տեսնում ենք, հայերենում հետին դաշտի առանձնացում ևս հնարավոր է կրկին տրամաբանական շեշտի ներքո:

⁹Engel U. Syntax der deutschen Gegenwartssprache, Berlin, Erich Schmidt Verlag GmbH & Co., 1994.

¹⁰Dürscheid Ch. Syntax.Grundlagen und Theorien, Göttingen, Vandenhoeck & Ruprecht GmbH & Co. Kb., 2007, S. 104-105.

Ստորև բերված օրինակներն ինչ-որ կերպ կարելի է քերականորեն ճիշտ համարել (հաշվի առնելով որոշ համատեքստային նախապայմաններ), սակայն դրանք խիստ նշույթավորված են /հմմտ.Dürscheid, 2007:106/:

? Ich habe gewartet **auf meinen Chef**.

? Die Sitzung hat gedauert **die ganze Nacht**.

Նման «շրջանակագերծումների» կողքին, որոնք նշույթավորված են, կան հետին դաշտի զբաղեցումներ, որոնք պարտադիր են: So [...] dass շաղկապով կապակցվող երկրորդական նախադասությունների հիմնական դիրքն, օրինակ, հետին դաշտն է: Մյուս երկրորդական նախադասություններն, ինչպես նաև անորոշ դերբայով նախադասությունները կան նախադաշտում են, կան հետին դաշտում, սակայն ոչ երբեք միջին դաշտում:

Er hat alles so geplant, **dass nichts schief gehen konnte**.

Նա է ամեն ինչ այնպես պլանավորել, **որ ոչ մի վատ բան չլինի**:

Ich habe nicht daran gedacht, **weil ich keine Zeit hatte**.

Ես դրա մասին չեմ մտածել, **քանի որ ժամանակ չունեի**:

Dass seine Mutter log, wusste er seit gestern /Zweig, 2001:49/.

Այն, որ նրա մայրը ստում էր, գիտեր նա դեռ երեկվանից:

Er hat mir versprochen, **heute nicht spät zu kommen**.

Նա ինձ խոստացել է, **այսօր շատ ուշ չգալ**:

Ուշագրավ է, որ նշված բոլոր դեպքերում հետին դաշտի առկայությունը հնարավոր է նաև, երբ ստորոգյալը բաղադրյալ չէ (աջ շրջանակն ուստի դատարկ է):

Երրորդ գլուխը(«Գերմաներենի ներլեզվական միտումների յուրահատկությունները») նվիրված է գերմաներենի ներլեզվական միտումների ուսումնասիրությանը: Ցանկացած լեզվում ներլեզվական միտումներն օրինաչափ են, ինչն արտահայտվում է լեզվի գործածության և փոփոխության օրինաչափությամբ: Այլ կերպ, ցանկացած լեզվական միավոր, շարահյուսական կառուցվածք կամ քերականական ձև պայմանավորված է այդ միտումների գործողությամբ և խոսողի ազդեցությունը դրանց վրա սահմանափակվում է միայն անհատական խոսքի ձևավորման յուրահատկություններով: Միևնույն ժամանակ լեզվի ցանկացած փուլում գործող ներլեզվական միտումները հետևանք են նախորդող փուլերում այլ միտումների գործողության:

Տարածամանակայնորեն լեզվական միտումները կրկնվող են և լեզվի ավելի վաղ փուլում գործող միտումները կարող են կրկնվել ավելի ուշ շրջանում: Առանձին խնդիր է նաև, թե ինչն է խթան հանդիսանում լեզվական միտումների գործողության համար, եթե նկատի ունենաք, որ համաժամանակյա փուլում դրանք ուղղված են համակարգի ներսում հավասարակշռության պահպանմանը: Այստեղ արդեն կարևոր դեր ունեն արտալեզվական գործոնները, որոնք ոչ ուղղակիորեն ազդում են ներլեզվական միտումների գործողության վրա՝ փոխելով համապատասխան միտումի գործողության ուղղությունը: Այդ

ազդեցության բնույթի որոշումը բավական բարդ խնդիր է, քանի որ հասարակական բնույթի գործոն-խթանները ընդհանրական չեն. մի դեպքում դրանք կարող են լինել հասարակական, քաղաքական, երբեմն բնակլիմայական պատճառներով, մեկ այլ դեպքում՝ լեզվական հանրույթի հոգեբանական կերտվածքի փոփոխությամբ: Այդպիսով, արտայեզվական գործոնները, հանդիսանալով խթան լեզվական միտումների գործողության համար, կարող են, կախված տվյալ հանրույթի հասարակական և գիտակցական վիճակից, տարբեր լինել¹¹:

Ըստ Հ. Մոզերի, լեզվական փոփոխությունները բոլոր ժամանակներում էլ կապված են «հոգեբանական շարժիչ ուժերի հետ»¹²: Նրա կողմից նշված «շարժիչ ուժերը» մասամբ անհատական-հոգեբանական, խմբակային-հոգեբանական, մասամբ էլ սոցիալական, բարոյական և գեղագիտական բնույթի են՝ ինչպես համակարգայնացումը, խնայողությունը՝ (բառաբարդումներն ու հապավումները), վերացարկումը (նախածանցներ, վերջածանցներ և այլ վերջավորություններով գոյականական վերացարկումներ) և այլն:

Ն. Բորեցկին լեզվական փոփոխություններին անդրադառնալիս առանցքային է համարում ինչպես նպատակահարմարությունը, այնպես էլ կառուցվածքային և գործառնական տեսանկյունից առաջացած փոփոխությունները: Ընդ որում կառուցվածքային տեսանկյունից կարևոր գործոններ են լեզվի տարբեր փուլերից եկող փաստերի համադրումը և լեզվի կարգային հարաբերությունների բարդության աստիճանների համեմատությունը (այսինքն թե լեզվում ինչպիսի հատկանիշներ, տարրեր, հարաբերություններ են ենթարկվել փոփոխության)¹³: Լ. Էբերթը լեզվի փոփոխություն ասելով հասկանում է (շարահյուսության մեջ) քերականական կանոնների փոփոխությունը և, առանձին փաստերից ելնելով, փորձում է բացատրել նոր կանոնների առաջացման, հների կորստի կամ դրանց փոխակերպման պատճառները¹⁴ :

Վերոհիշյալ գլխում քննության են առնվում նաև նախադասության ներսում կաղապարների փոփոխության, անվանական խմբի ընդարձակման, «շրջանակագերծումների» վերաբերյալ խնդիրները, ինչպես նաև ժամանակի, սեռի, եղանակի քերականական կարգերում, ժխտման համակարգում առկա միտումնային բնութագրերը:

¹¹Պարբիեյան Յու. Հայերենը և նախահնդեվրոպական լեզուն, Երևան, Մակմիլան-Արմենիա, 2001, էջ 95-121:

¹²Moser H. Probleme der sprachlichen Ökonomie im heutigen deutschen Satz // Studien zur Syntax des heutigen Deutsch, Düsseldorf, Schwann, 1970, S. 9-25.

¹³Boretzky N. Einführung in die historische Linguistik, Reinbek bei Hamburg, Westdeutscher Verlag GmbH, 1977, S. 66.

¹⁴Ebert R. P. Historische Syntax des Deutschen, Stuttgart, Verlag J. B. Metzler, 1978, S. 10.

Եզրակացության մեջ իմի են բերվում ուսումնասիրության արդյունքները:

Համապատասխան խնդիրների քննությունից հետևում է, որ հին բարձր գերմաներենի գրավոր հուշարձանների լեզուն հիմնականում բնութագրվում է այս կամ այն բարբառի գերակայությամբ: Թեև չկար նախադասության սահմանների հստակ ուրվագիծ, այդուհանդերձ գրավոր հուշարձաններից շատերը, որոնք անմիջականորեն լատիներենի ազդեցությամբ էին ստեղծվել, որոշակի կերպով պահում էին լեզվի ազատությունը՝ ազատ փոփոխելով համապատասխան բնօրինակի կառույցները սեփական լեզվի կառույցներով: Վերլուծությունը ցույց է տալիս, որ հ.բ.գ.-ում նախադասությունն այնքան էլ պարզ չի եղել, ինչը խթանվել է նախադասության մեջ կիրառվող տարբեր միջոցների ստեղծման համակարգով, որոնք ապահովում էին նախադասության կառուցվածքային ամբողջությունը: Մեծ դեր է խաղում նաև հնչերանգը՝ դարձնելով այն հաղորդակցական տեսանկյունից որպես մեկ ամբողջություն: Շարադասական տեսանկյունից նշվում է նախադասության անդամների հարաբերականորեն ազատ դիրքը:

Միջին բարձր գերմաներենի շարահյուսական կառույցների առանձնահատկություններն ու դրանց հետագա զարգացումն անմիջականորեն կախված է գրավոր հուշարձանի թեմատիկայից, ժանրից, ինչպես նաև քիչ թե շատ գրողի անհատական ոճից: Այս շրջանում բարդ բայական բաղադրիչների տարածական բաշխումն առավել հստակ, քան հ.բ.գ.-ում է, ձևավորում է մասնակի կամ լիարժեք շրջանակային կառույցներ: Այսպիսով, կարելի է ասել, որ չնայած այն փոփոխություններին, որոնք կատարվել են հ.բ.գ.-ից մ.բ.գ.-ին անցման շրջանում, շարադասության ընդհանուր համակարգը զգալի փոփոխություն չի կրում: Վերոհիշյալ շրջանին ևս բնութագրական է բարբառային գերակայությունը:

Վաղ նոր բարձր գերմաներենի համար հատկանշական է նախադասության կառուցվածքային ամբողջականության ապահովումը հիմնականում շրջանակային կառույցների միջոցով: Ուսումնասիրվող շրջանը ներկայանում է նախադասության ծավալի ընդարձակմամբ՝ ինչպես անորոշ դերբայական կառույցների ներմուծմամբ, այնպես էլ գոյականական խմբի ծավալի ընդլայնմամբ:

Արդյունքում վերոհիշյալ երևույթների պատմական քննությունից հետևում է, որ ընդհանուր տիպաբանության տեսակետից գերմաներենը ցուցաբերում է բնական լեզուներին բնորոշ շարահյուսական կառուցվածքների փոփոխության միտումնային բնութագիր: Ըստ այդմ գերմաներենի նախադասության ձևավորման և նրա անդամների միջև փոխհարաբերությունների իրացման պայմանները կարող են դիտարկվել որպես ներլեզվական միտումների, ինչպես նաև արտալեզվական գործոններով պայմանավորված տարածամանակյա միտումների ծավալման հետևանք: Ինչպես ցույց են տալիս սույն աշխատանքում կատարված վերլուծությունները, հին բարձր գերմաներենին կարելի է բնութագրական համարել SVO, SOV և

VSO շարահյուսական կադապարները, և այդ տեսակետից գերմաներենը սահմանել որպես խառը տիպի լեզու: Նման իրավիճակ կարելի է տեսնել նաև գերմաներենին ցեղակից այլ լեզուներում՝ մասնավորապես հայերենում: Այսպիսով կարելի է ասել, որ թե՛ գերմաներենի և թե՛ հայերենի հին շրջաններում տեսանելի են շարահյուսական կառուցվածքի իրացման նմանություններ, որոնք հետագայում փոքր-ինչ աղոտանում են: Ծագումնաբանական տեսակետից ժառանգելով հնդեվրոպական նախադասության հիմնական գծերը, ինքնուրույն զարգացման ընթացքում վերջիններս ծեռք են բերել նոր գծեր:

Կատարված վերլուծությունը թույլ է տալիս եզրակացնել, որ շարադասական առանձին դաշտերի բաժանումն, իսկ առավել ստույգ բաղադրյալ բայական անդամի երկփեղկումը (թեքվող և չթեքվող մասերի տարանջատումը) և այլ անդամների ներթափանցումը դրանց միջև բնութագրական է գերմաներենին: Վերլուծության ընացքում, սակայն, պարզ է դառնում, որ վերլուծական կամ բաղադրյալ ժամանակների կիրառության դեպքում, ինչպես նաև երկրորդական վերլուծական ժամանակների դեպքում տրամաբանական շեշտի առկայությամբ հայերենում ևս հնարավոր է որոշակիորեն տարանջատել շարադասական դաշտեր: Անգլերենում ևս միջին և հետին դաշտերի առանձնացում չկա, քանի որ գլխավոր նախադասության մեջ բայի թեքվող և չթեքվող ձևերն ընդմիջարկվող չեն և երկրորդական նախադասության մեջ բայը վերջում չի դրվում:

Ցույց է տրվում, որ նախադաշտից առաջ էլ կարող է դրվել նախադասության որևէ բաղադրիչ: Նշված դիրքը գերմանագիտության մեջ անվանվում է նախանախադաշտ: Շարահյուսության տեսանկյունից կարևոր առանձնահատկությունն այն է, որ նշված դաշտի բաղադրիչները հեշտությամբ կարող են դուրս բերվել նախադասության կազմից՝ չխախտելով վերջինիս քերականական ճիշտ կառուցվածքը:

Նախադաշտի զբաղեցումը դիտարկվում է որպես հաղորդակցական գործունեություն, որն ունենալով համապատասխան նշանակություն, չի կարող թույլ տալ անդամների կամայական զբաղեցում: Ընդհանուր առմամբ նախադաշտի ընդհանուր բնութագիրը կարելի է տալ՝ առանձնացնելով հետևյալ բնութագրական գծերը. գերմաներենում նախադասությունը հանդես է գալիս նախադաշտով, որը մեծամասամբ մեկ անդամ է ներառում, թեպետ բազմակի անդամներով հանդես գալը ոճական նկատառումներով ևս հազվադեպ հանդիպող երևույթ չէ: Թեմատիկ և ռեմատիկ բաղադրիչների առկայությունը կրկին նախադաշտը բնութագրող ցայտուն գծերից է, ընդ որում առաջինի գերակայությունը պայմանավորված է տրամաբանական շեշտով: Հայերենում ևս հնարավոր է նախադաշտի առկայություն, հիմնականում տրամաբանական շեշտիներքո և ինչպես գերմաներենում, այստեղ ևս նախադաշտը կարող է զբաղեցվել ինչպես մեկ, այնպես էլ բազմակի անդամներով:

Գերմաներենում նախադասության մեջմիջին դաշտում անդամների շարահատական առնաձնահատկություններն ուսումնասիրելիս եկել ենք այն եզրահանգման, որմիջին դաշտում անվանական անդամների ոչ նշույթավորված հերթագայությունն է՝ ենթակա-հայցական խնդիր-տրական խնդիր, բայց վերջին դիրքում նախադասություններում նախդրավոր խնդիրը կրկին նախորդում է բային, միջին դաշտում առկա է միտում թեման ռեմայից առաջ դնելու, իսկ որոշյալ անվանական ասույթն՝ անորոշից առաջ: Հայերենում, սակայն, ինչպես նախադաշտի դեպքում, միջին դաշտի առկայությունը և այս դաշտում շարահատական գրեթե բոլոր առնաձնահատկությունները պայմանավորված են տրամաբանական շեշտով:

Հետին դաշտի ընդհանուր բնութագրական գծերը հետևյալն են. նշված դաշտի զբաղեցումը առաջնային չէ, և այստեղ կարող են իրացվել սահմանափակ քանակությամբ տարրեր: Հայերենի դեպքում հետին դաշտի առկայությունը կրկին տրամաբանական շեշտով է պայմանավորված: Գերմաներենում և հայերենում հետին դաշտում կարող են դրվել մեկից ավելի անդամներ, ինչպես նաև բարդ հարաբերական նախադասություններ, որոնք, սակայն, նշույթավորվածության բնույթ են կրում:

Անդրադառնալով գերմաներենի տիպաբանության միտումնային բնութագրին հարկ է նշել, որ «միտում» հասկացության համար կարևոր է երկու հատկանիշի ընդգծումը՝ փոփոխության ուղղության և յուրաքանչյուր լեզվում առկա փոփոխական և կայուն բաղադրիչների փաստը: Տույց է տրվում, որ փոփոխությունը և կայունությունը լեզվի պատմության զարգացման ընթացքում հավասարապես բնական փուլեր են: «Միտում» ասելով հասկանում ենք որևէ գործընթացի սկիզբ, շարունակություն կամ ուղղություն, և այն չի վկայում այն մասին, որ զարգացումն անբողջությամբ ավարտվել է: Կառուցվածքային տեսանկյունից կարևոր գործոններն են լեզվի տարբեր ժամանակաշրջանների համադրումը և լեզվի կարգային հարաբերությունների բարդության աստիճանների համեմատությունը, այսինքն թե լեզվում ինչպիսի տարրեր, հարաբերություններ են ենթարկվել փոփոխության:

Համապատասխան վերլուծություններըցույց են տալիս, որ նախադասության կաղապարների փոփոխության միտումը որոշակիորեն կապված է կրճատման միտման հետ, քանի որ լեզվում նախընտրելի կառույց է դառնում ավելի պարզ, մատչելի և խնայողական տարբերակը: Համապատասխան կաղապարների փոփոխությունը կարող է հանգեցնել անդամների կրճատման, ինչի արդյունքում ստացվում է նախադասության ծավալի ընդհանուր կրճատում:

Քննարկելով նախադասության հինգ հիմնական կաղապարները՝ գալիս ենք այն եզրահանգման, որ ենթակա-ստորոգյալ-սեռական խնդիր և ենթակա-ստորոգյալ-տրական խնդիր պարունակող կաղապարները կիրառության տեսանկյունից հետընթաց են ապրել, իսկ ենթակա-

ստորոգյալ-հայցական խնդիր և ենթակա-ստորոգյալ-նախդրավոր խնդիր պարունակող կադապարներն՝ առաջընթաց:

Վերլուծությունից հետևում է, որ գոյականական խմբի զարգացումը գերմաներենի ժամանակակից փուլում աչքի է ընկնում իր ծավալի ընդարձակմամբ և հաճախակի գործածությամբ: Շարահյուսական այս կառույցի նման զարգացումը ևս պետք է նշել, որ արդյունք է լեզվական խնայողության:

Աշխատանքում քննարկվող շրջանակային կառույցների դեպքում միտում է նկատվում «շրջանակագերծման», որն արդեն չի դիտվում որպես շեղում ընդհանուր կանոնից, և առաջ է բերում գերմաներենի շարահյուսական յուրահատկություն, որը վերաբերում է նախադասության տարբեր հատվածների համակցմանը:

Ժխտման քերականական կարգի պատմական զարգացման վերաբերյալ ուսումնասիրությունները ցույց են տալիս, որըստ «Եսպերսենիցիկլի» տեղի է ունեցել ժխտական տարրի «սաստկացում», հիմնականում արտահայտության պլանում ուիտ ժխտական մասնիկի օգնությամբ: 13-րդ դարից սկսած մեծանում է ուիտ ժխտական տարրի ինքնուրույն կիրառումը: Ժխտական ցուցիչի դիրքային փոփոխությունների հետ կապված պետք է նշել երեք հիմնական դիրքային տարբերակներ՝ 1. ժխտում-բայ, 2. ժխտում-բայ-ժխտում (տարարմատ ժխտում), 3. բայ-ժխտում:

Ատենախոսության հիմնադրույթներն արտացոլված են հետևյալ հրապարակումներում.

1. Խանոյան Ն. Ս. Անգլերենի one's way և գերմաներենի անդրադարձ դերանունով կառույցների առանձնահատկությունները // Լեզու և լեզվաբանություն, Երևան, Զանգակ-97, 2009, № 10, էջ 37-44:

2. Խանոյան Ն. Ս. Շրջանակային կառույցների ձևավորման յուրահատկությունները գերմաներենում // Օտար լեզուները Հայաստանում, Երևան, Կրթության ազգային ինստիտուտ, 2012, № 2, էջ 46-52:

3. Խանոյան Ն. Ս. Նախադասության կազմում բայի դիրքի տիպաբանական յուրահատկությունները ժամանակակից գերմաներենում // Օտար լեզուները Հայաստանում, Երևան, Կրթության ազգային ինստիտուտ, 2012, № 3, էջ 33-39:

Нелли Саркисовна Ханоян

Типологические особенности синтаксиса немецкого языка

Диссертация на соискание ученой степени кандидата
филологических наук

по специальности Ж. 10. 02. 07 «Германские языки».

Защита состоится 10-го мая 2013г. в 14.30 на заседании
специализированного совета 009 ВАК РА, действующего в
Ереванском государственном университете (Ереван, Алека Манукяна 1).

Резюме

Объектом изучения реферируемой диссертационной работы являются типологические особенности синтаксиса немецкого языка.

Цель исследования – всесторонне изучить особенности синтаксических структур немецкого языка как с диахронической так и синхронической точки зрения, в отдельных случаях включая также соответствующие факты армянского языка.

В соответствии с целью исследования в работе ставятся и решаются следующие задачи:

1. подробно представить средства обеспечения структурной целостности предложения с учетом четких тенденций формирования староверхнемецкого, средневерхнемецкого, ранненовонемецкого,
2. с позиции диахронической типологии провести анализ особенностей и дальнейшего развития различных синтаксических структур, существовавших в указанные периоды,
3. описать развитие различных синтаксических структур в нововерхнемецком, придавая особое значение роли глагола и его типологическим характеристикам,
4. изучить развитие “рамочных структур” и типологические особенности отдельных синтаксических полей в предложении, благодаря которым становится возможным объяснение многих синтаксических явлений в немецком языке,
5. представить изменения в немецком языке в различные периоды его развития, по возможности обосновать их в свете новых функциональных теорий изменения языка,
6. рассмотреть изменения моделей внутри предложения, обобщенные характеристики сокращения объема предложения.

Актуальность темы обусловлена особой значимостью на современном этапе развития языкознания теории по типологии языков а также тем, что исследуемые теоретические и практические проблемы конкретного языка более продуктивно совмещаются в исследованиях типологического

характера, которые дают возможность наибольшего обобщения особенностей языковых явлений.

Научная новизна. В работе впервые делается попытка анализа типологических особенностей синтаксической структуры немецкого языка с применением хронологических реалий и фактов, характерных для различных этапов развития немецкого языка. Новизна данного исследования заключается также в том, что при выяснении соответствующих явлений используются также факты армянского языка, что способствует как выявлению целого ряда особенностей немецкого, так и выявлению сущности отдельных синтаксических конструкций армянского языка.

Рассматриваемые проблемы исследуются с применением следующих лингвистических методов: общего сравнительного, сопоставительного, дистрибутивного, трансформационного и метода структурного анализа.

Данная работа состоит из введения, трех глав и заключения. Отдельно даются также списки использованной научной и художественной литературы, словарей и сокращений.

Во введении обосновывается выбор темы, актуальность, научная новизна, теоретическое и практическое значение, отмечается предмет исследования, цели и использованные методы.

В первой главе представлена диахроническая типологическая характеристика синтаксической структуры немецкого языка. Различные синтаксические структуры анализируются в рамках различных этапов развития немецкого языка: староверхненемецкого, средневрхненемецкого, ранненовонемецкого.

Во второй главе проводится анализ типологических особенностей синтаксиса современного немецкого языка, выявляются особенности порядка слов, где исходной точкой анализа являются рамочные структуры.

Третья глава посвящена изучению внутрilingвистических тенденций немецкого языка.

В конце диссертации подведены итоги работы, представлены основные результаты исследования.

Nelli S. Khanoyan

THE TYPOLOGICAL PECULIARITIES OF THE SYNTAX IN GERMAN

Research paper for acquisition of scientific degree in the field of philological sciences, with specialization in 10.02.07 „Germanic languages“.

The defence of the dissertation will take place on the 10th of May, 2013 at 14:30 p.m. in

Yerevan State University (Yerevan, Alek Manukyan 1).

Abstract

The **object** of the present thesis is the typological peculiarities of the syntax in German.

The research is **aimed** at analyzing the peculiarities of the syntactic structures of German both from the diachronous and synchronous viewpoints. Applying questionnaire and etalon principles simultaneously the typological peculiarities of the syntax are revealed with intralingual regularities, tendencies and with corresponding facts of the Armenian language as well.

The following **objectives** are set forth to achieve the goal of the research:

1. to describe the means, which create conditions for structural entity of the sentence in old high-, middle high- and early new high German, accounting the distinct tendencies of their formation;

2. to analyze the peculiarities and further development of the various syntactic structures, which are present in the above-mentioned stages from the diachronous viewpoint;

3. to elucidate the development of the syntactic structures in new high German attaching importance to the position of the verb in the sentence;

4. to examine the development of the „frame structures“, the typological peculiarities of the topological fields in the sentence;

5. to describe the changes, which are present in the different stages of the development of German, trying to substantiate them due to the new functional theories of the language change;

6. to determine the tendencies towards the reduction of the size of the sentence, the change of the models within the sentence, the changes in the categories of time, voice, mode.

The study is based on the following methods: the methods of structural, componential, transformational and contrastive analysis.

The theme of this study is considered **topical** as at the present stage of development of linguistics the typological theories of languages are very important: the theoretical and practical problems of languages are more efficiently combined in typological studies, which allows the generalization of different peculiarities of linguistic phenomena.

The **novelty** of the research is, on the one hand, the systematic description of the syntactic structures at different stages of development of the German language and, on the other hand, the study of typological peculiarities of the syntax in

German applying the modern typological principles, in particular the simultaneous application of questionnaire and etalon principles, the etalon language being Armenian. The contrastive analysis reveals the essence of the syntactic structures in German more effectively and presents its complete linguistic characterization at different levels.

The paper consists of an introduction, three chapters, conclusion, bibliography and of an abbreviation list.

The **introduction** presents the object, the theoretical and methodological framework, the goals and objectives, the topical issues and novelty, the theoretical and practical significance of the research and the structure of the paper.

Chapter 1 presents the diachronous typological character reference of the syntactic structure of German. The various syntactic structures are observed at different stages of development of the German language.

Chapter 2 is devoted to the analysis of the peculiarities of syntax of modern German, topological fields where the starting point of the analysis is „frame structures“.

In Chapter 3 an attempt has been made to examine the intralingual tendencies of modern German.

The **conclusion** presents the main findings of the study.

